

շիւ կտակաւանդեալ ի հանգ. Ռափայելէ Տէր - Գարրիէլեան Փոփով 850 բուբ. համաձայն կարգաւորութեան Հոգաբարձական Խորհրդոյն ի 25 նոյեմբերի 1875 ամի . . . . .	1,000	—
է. Տասն տոմսակք -- Արևելեան փոխառութեան ի հաշիւ կտակաւանդեալ գումարին ի մահտեսի Կարապետէ Շըլլթեան	1'000	—
շ. Տասն տոմսակք նոյն Արևելեան փոխառութեան ի հաշիւ կտակաւանդեալ գումարին ի հանգուցեալ Գասպարայ Մարկոսեան Փոփով . . . . .	1,000	—
է. Վեց տոմսակք նոյն Արևելեան փոխառութեան . . . . .	600	—
ը. Մի տոմսակ ք. Արևելեան փոխառութեան . . . . .	100	—
ր. Երկու տոմսակք ք. Արևելեան փոխառութեան . . . . .	200	—
ժ. Առնելիք ի ստորագրութենէ նուիրատուաց . . . . .	290	—
ժ-- Պատրաստի գումար գրամոյց . . . . .	1,403	35
	Գումար . . . . .	8,793 35

Բայց յայտննէ Ընկերութիւնս ունի նաև մի խանութ աղիւսեայ Օտապաշեան կրպակաց կարգին, նուիրեալ ի բարեօգաշառուհի տիկնոջէ Մարիամայ Մովսիսեան 2որչոփեանց:

Ի վերջ հաշույս Հոգաբարձական Խորհուրդս հարկ համարի յայտնել Ընդհանուր Թողովոյ Մեծապատիւ Անդամոցդ, որ Խորհրդոյս անդամոց երկամեայ ծառայութեան ժամանակն արդէն լրացած է, ուստի և կիսնորէ որ բարեհաճիք առնել ընտրութիւն նոր Հոգաբարձուաց Խորհրդոյ:

Նախագահ Խորհրդոյն Մէլայէլ Մահրեօեան  
Գանձապահ ,, Յովննէն Զայլտիտան:

- ԱՆԴԱՄՔ.
- Լուսապարտուր ա. Ժան. Օւարիթեանց.
  - Եղիպան Պապայեան.
  - Սարեփաննաս Պոպով.
  - Թարգեոս Վէլլէ-Շահինեան.
  - Սարգիս Վիսպեան.
  - Լուսապարտուր Սարեփաննասեան.
  - Մարտիրոս Ժան. Ղառնչապէտեան

Հաւաստի աղբիւրներից լսեցինք, որ մեր նոր-նախիջեանի սիրելի Ազգայնոց ոմանք մտադիր են փակել տալ Ս. Խաչ վանքի գիշերօթիկ Գարոցը, որը 15—16 տարի գոյութիւն է ունեցել վանքի և տեղւոյն Մարդասիրական Ընկերութեան միացեալ օժանդակութեամբ և նորա փոխարէն բանալ քաղաքի մէջ մի այլ դպրոց յիշեալ ընկերութեան անմիջական հսկողութեան ներքոյ, ուստի և աւելորդ չենք համարում մի քանի խօսքերով յայտնել այս մասին մեր անկեղծ կարծիքը:

Մեզ շատ անգամ է պատահել լսել ու կարդալ հայի անցեալ կեանքին ու պատմութեանը անտեղեակ ոմանց ճանապարհորդաց այն ըստ իս անտեղի կարծիքը թէ՛ հայերը առէլէ կրօնաւոր էր ասում էր, Հայաստանի ամեն մի հովատուն հովիտներում, անտառապատ լեռանց գագաթներում ու կողերում և ձորաբաշերում հանդիպելով բազմաթիւ վանքերի և ճգնարանների:

Թէ հայերը աւելի կրօնասէր քան ուսումնասէր եղած են, աւելի հմուտ պատմագետներին թողնելով բացատրել, հայկ. վանքերի վերաբերութեամբ յիշեալ անտեղի կարծիքը գէթ մասամբ փարատելու համար հարկ կհամարիմ ասել, որ Հայկական վանքերը մեր նախնեաց աչքում ոչ միայն աղմկալից աշխարհիցս խոյս տուող և հոգւոյ անդորրութիւն որոնող հայ կրօնասիրի ապաստանարան և ճգնարան է համարուել, այլ նաև ուսմանց ու զիտութեանց ճրագարան և կեդրոն հայկական մտաւոր և բարոյական լուսաւորութեան և այդ այն ժամանակներում, երբ հայ ժողովուրդը քաղաքական ուժից ընկած, ներքին և արտաքին խռովութեանց երեսից հալածուած, հաղիւ էր կարողանում միայն իւր գոյութիւնը պահպանել, Սոյն իսկ հայեացքով ահա այդ ժամանակներում վանք կառուցանել հայի համար նշանակումէր կառուցանել և ճգնարան և կրթարան, նուէրներ տալ, կալուածք յատկացնել նորան, նշանակումէր ծառայել և հոգւոյ փրկութեան և կրթութեան գործին միապէս, և այդ միակ նպատական ևս բազմացել և գոյութիւն են ունեցել Հայաստանի զանազան կողմերում Հայկ. վանքերն ու մենաստանները իւրեանց հարուստ կալուածներով հանդերձ, Խօսքիս ազացոյց՝ բաւական է յիշել այդպիսի վանքերից մի քանիսը միայն, այն է՝ Սանահին, Հաղբատ, Տաթև և լին. և լին. որոնք իւրեանց ծաղկեալ դրութեան ժամանակներում ընծայելով Հայ ազգին և եկեղեցւոյն նշանաւոր և պիտանի անգամներ, ամենայն իրաւամբ վայելած են ազգի ջերմ համակրութիւնն ու նորա առատ նիւթական տուրքը իւրեանց գոյութիւնը ապահովելու համար, Սորանից հասկանալի է, որ վանքի համար միայն չէր բաւարարուած միանպատակ հաստատութեանց նշանակութիւնն են ունեցել մեր նախնեաց աչքում, Եթէ մեր նախնիքը այս հայեացքն ու նպատակն են ունեցել գէպի հայկական վանքերը, մեք ևս նոցա հայեացքիցն ու նպատակիցն իրաւունք չունիմք մի մազաչափ շեղուելու այդ ազգային հաստատութեանց վերաբերութեամբ, Իսկ եթէ հայ ժողովուրդը ցայսօր ևս չէ խնայում մեր վանքերին անխտիր իւր տուրքն ու մատաղը, խունկն ու մոմը, այդ պէտքէ վերաբերել նորա բնածին կրօնասիրութեանը, և հետևաբար օգտուել այդ բարի զգացմունքից, նորա այդ նուէրներն ու տուրքերը նորա մանուկների դաստիարակութեան գործին ծառայեցնելով և ոչ մի քանի մասնաւորների շահուց. ապա թէ ոչ, ինչպէս փորձը ցոյց է տալիս, նոցա պարզ սրբանի մէջ այդ զգացման շիջման ևս պատճառ լինելով զգալի կորստեան

կենթարկուինք: Աւ միթէ խօսքիս բաւական պարզ ապացոյց չէ՞ ներկայ վանօրէից զրուծիւնը: Այս օրուան օրս ո՞ր վանքն ու վանականքն են առաւելապէս վայելում առհասարակ մեր ազգայնոց ջերմ համակրութիւնն ու նուէրները. ո՞չ ապաքէն նորա, որոնք ունին իւրեանց մէջ փոքր իշատէ, թէկուզ գրել կարողալ ուսուցանելու չափով, կրթութեան գործին ծառայող մի գպրոց: Աւրեմն հարկ անհրաժեշտ է մեզ մեր ներկայումս ունեցած մի քանի նշանաւոր վանքերը ջանալ վերածել իւրեանց նախկին ազգօգուտ զրութեանը, այն է ունենալ նրանում մի մի, թէկուզ փոքրիկ ծրագրով, կանոնաւոր և նպատակայարմար գպրոց, որով հայ ժողովրդին բարոյապէս ծառայելով, թէ՛ անշէջ պահպանած կլինիմք նոցա սրտի մէջ կրօնասիրութեան քաղցր զգացմունքը և թէ՛ փոխադարձաբար կվայելեմք նոցա ջերմ համակրութիւնն ու առատ տուրքերը:

Այս մի քանի տողերը գրելու առիթ առեց ինձ նոր-Նախիջևանի մեր սիրելի Ազգայնոց ոմանց Ս. Խաչ վանքի դպրոցը փակելու դիտաւորութեան լուրը, որը արդարև կարեւոր խոցեց թէ՛ իմ և թէ՛ ամեն բարեմիտների սիրտն ու հոգին. ուստի պարտք կհամարիմ անկեղծ ցաւակցութեամբ խորհուրդ տալ յիշեալ ազգայնոց հետի մնալ այդ դիտաւորութիւնից, հաւաստի կացուցանելով, որ որչափ և ծանր ու հարկեցուցիչ լինէին այդ դիտաւորութիւններ ծնուցանող հանգամանքները, այնու ամենայնիւ այդ դիտաւորութիւնը անխոհեմ ու վնասակար է. որովհետև նախ՝ որ փակելով այդ դպրոցը, որի մէջ սնանում, ապրում և կրթութեան երեսնաչափ աղքատ հայ գիւղական մանուկներ, քանզաւ կլինիք այդ վանքի և հայ՝ մանաւանդ գիւղական ժողովրդեան մէջ եղած սերտ կապն ու վերջնոց համակրութեան և կրօնասիրութեան զօրեղ միջոցը: Երկրորդ՝ վանքի այն բաւականաչափ թէ՛ ժողովրդական և թէ՛ կալուածական եկամուտները, որոնք ծառայել և ծառայում են ցայտօր գիւղական հայ աղքատ մանուկների մարմնական և մտաւոր սննդեանը և վանքի շինութեանն ու պայծառութեանը, տեղիք տուած կլինիք այնուհետև մի քանի մասնաւոր անձանց շահերին ծառայելու. իսկ Մարդասիրական Ընկերութիւնը, որը իսկզբանէ անտի մինչև ցայտօր նպաստած է այդ վանքի դպրոցին, եթէ զրկելով գիւղական աղքատ հայ մանուկներն իւր ցայտօր մատակարարած մարմնական և մտաւոր սննդից, քաղաքումը կամենայ բանալ նորա փոխարէն մի այլ դպրոց, մեծ ծառայութիւն արած չի լինիլ իւր քաղաքակիցներին, կրթելով քաղաքի այն մանուկներին, որոնք առանց դորան ևս շատ միջոցներ ունին կրթուելու և ուսանելու, այս դէպքում գիւղացու զրկանքը մեծ է, որովհետև դժուար և անկարելի կլինի իւր մանուկը բերել քաղաք, հոգալ նորա բնակարանը, սնունդն ու հագուստը, որոնք վանքումը մատակարարվումէին նորան ձրիապէս վանքի և Մարդ-Ընկերութեան միացեալ օժանդակութեամբը:

Այս մեր անկեղծ կարծիքն է: Թող այս մասին լուս մտածեն մեր նոր-  
նասիրչեանի ազգայինք և այնպէս ընտրեն իւրեանց և Ազգի Հասն ու  
վնասը:

Ավ լսելու ականջ ունի՝ թող լսէ:

ԱՍՂԱԿ ՎԱՐՎԱՐՆԵՏ:

Աստրախանի Արժ. Յոխէփ աւագ քահանայն Բուենիաթեանց  
յոգուտ Գ. ճեմարանի Մայր Աթոռոյս Հանգանակած է Հեռու-  
եալ գրամական նուէրներն Աստրախանարեակ մեր սիրելի Ազ-  
գայիններէց, որոց նուէրների քանակութիւնը եւ նոցա անուն-  
ները Հրատարակելով Արարատիս միջոցաւ: Հրատարակական  
խորին շնորհակալութիւն կ'յայտենմք թէ՛ Մեծ. նախարարու Ազ-  
գայնոց եւ թէ՛ Արժ. Յոխէփ աւագ քահանային իւր ազգօգուտ  
գործունէութեան համար:

ԱՆՈՒԱՆԱԿԸՆ ՅՈՒՅԱԿ ՆՈՒԻՐԵՏՈՒԱՅ.

Բ ու թ .

1.	Մարգար Գալթեան Մամաջանեանց . . . . .	25
2.	Գէորգ Օհանեան Ելբարեանց . . . . .	25
3.	Գարրիէլ Յովհաննիսեան Ալուխանեանց . . . . .	25
4.	Գէորգ Մատթէոսեան Փարրիկանթեանց փասն երեցիո- խանի Խաչանեանց . . . . .	25
5.	Երեցիոխան Վաղարոս Գալթեան Եղեանց . . . . .	25
6.	Գէորգ Յակոբեան Սայատեանց . . . . .	25
7.	Աստուածատուր Մկրտչեան Կրասիլնիկեանց . . . . .	25
8.	Աղէքսանդր Նիկողայոսեան Փարսազանեանց . . . . .	25
9.	Երեցիոխան Եփրեմ Մազանդարանեանց . . . . .	10
10.	Յովհաննէս փարզապետ Շիրակունի . . . . .	10
11.	Մարգարիտ Գէորգեան Մատաթեանց . . . . .	10
12.	Միքայէլ Սարգսեան Սարգսեանց . . . . .	10
13.	Մելքոն Սարգսեան Սարգսեանց . . . . .	10
14.	Յակոբ Մանուկեան Ալաղժանեանց . . . . .	10
15.	Գէորգ Մարտիրոսեան Բարխուդարեանց . . . . .	10
16.	Գրիգոր Մկրտչեան Արէլեանց . . . . .	10
17.	Յովհաննէս Համբարձումեան Վարակէգեանց . . . . .	10
18.	Գարրիէլ Վարազեանց . . . . .	10

315

Ազգիս հանգուցեալ Վեհ Հայրապետը Հոկտեմբեր ամսու՛մ բարե-  
հաճեցաւ շնորհել Բարեչ. Հասնադարեան Մկրտիչ և Բազդասարեան  
Սահակ Վարդապետացն փարզապետական լանջախաչ, իսկ բարեշնորհ  
Վեոնդ փարզապետ Յովակիմեանցին՝ ծաղկեայ փիլոն՝ ի տրիտուր ե-  
ռանդուն ծառայութեանց իւրեանց:

\* \* \*

«Արարատ» ի ներկայ ամսաթերթը խմբագրութիւնիցս անկախ պատ-  
ճառներով յետաձգուցեալ Թող ներեն մեր սիրելի բաժանորդ Ազ-  
գայինք: